# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 339-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍՈՑԻԱԼ-ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 84-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Տիգրան Հմայակի Փիլոյանի 2023 թվականի հոկտեմբերի 04-ի դիմումը

**ո ր ո շ ու մ եմ**

1. Տիգրան Հմայակի Փիլոյանին 2023 թվականի հոկտեմբերի 06-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Սոցիալ-կրթական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար ։
2. Տիգրան Հմայակի Փիլոյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև 6/վեց/ ամիս ժամկետով՝ մինչև թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի ավագանու սահմանած դրույքաչափին համապատասխան ։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«05» հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2023թվականի N 340-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 48-րդ, 50-րդ կետերի դրույթներով

**ո ր ո շ ու մ եմ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված, համայնքային սեփականություն հանդիսացող, 08-010-0049-001 կադաստրային ծածկագրից 0,00133 հեկտար ընդհանուր մակերեսով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր, 2-րդ փողոց, 1/5 շինություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«09» հոկտեմբերի 2023 թվական

գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2023թվականի N 341-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՐԴԵՆԻՍ) ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՖԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ( ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔ) ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 78-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Վարդուշ Կնյազի Հարոյանը, իր 2022 թվականի օգոստոսի 15-ի դիմումի համաձայն, ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Ամասիա համայնքի սեփականությունը համարված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-017-0004-0010 կադաստրային ծածկագրով 0,12431 հեկտար մակերեսով հողամասի (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, գյուղ Արդենիս 7-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5)վրա ինքնակամ կառուցված բնակելի տան, անասնաշենքի և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը և իր պատրաստականությունն է հայտնել սահմանված

կարգով և ժամկետում վճարել գույքի արժեքը և գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները.

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-017-0004-0010 կադաստրային ծածկագրով 0,12431 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 73,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 82,8 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը (վկայական N 03082023-08-0027, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ամասիա համայնք, գյուղ Արդենիս 7-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հողամաս) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 366,353 (երեք հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել կառուցապատողին՝ քաղաքացի Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանին /նույնականացման քարտ՝ 010574770, տրված՝ 021 կողմից, 30 հուլիսի 2018 թվականին, հաշվառման հասցե՝ գյուղ Արդենիս, 4-րդ փողոց, տուն 4/ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«10» հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 342-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00133 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի դրույթներով

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-010-0049-0001 կադաստրային ծածկագրից 0,00133 հեկտար հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարելու նպատակով:

2. Հողամասի գործառնական նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«10» հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հոկտեմբերի 2023թվականի N 343-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԳՏԱՇԵՆ,ԿԱՄԽՈՒՏ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 120 ՀԵԿՏԱՐ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԲՈՒՆԻԱԹ ԱՂԱՍՈՒ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 1-ին, 2-րդ, 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 6-ի թիվ 58-Ա որոշումը և Բունիաթ Աղասու Սարգսյանի 2023 թվականի հոկտեմբերի 06-ի դիմումը

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի /բնակավայր՝ Գտաշեն, Կամխուտ/ սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 120 հեկտար 4-րդ կարգի արոտավայրը (կադաստրային ծածկագիր՝ 08-035-0344-0001-hg, 0343-0001-hg) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մեկ տարի ժամկետով տրամադրել վարձակալության քաղաքացի Բունիաթ Աղասու Սարգսյանին և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով:

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 192600(հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«10» հոկտեմբերի 2023 թվական

գյուղ Ամասիա

Հաստատում եմ
Ամասիա համայնքի ղեկավար
Կ.Տ.
«06» 10 2023թ.

# ՀՈՂԱՄԱՍԻ
# ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Տրամադրված է Սարգսյան Բունիաթին

Շիրակի մարզ Ամասիա համայնք բն. Գտաշեն (Կամխուտ)
Մարզ, Համայնք






| ՀՈՂԱՄԱՍԻ | | Շրջադարձային կետեր | Կոորդինատները | Գծային չափերը (մետր) | ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ: Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) | Համար, ըստ հատակագծի | Գործառական նշանակությունը (անվանումը) | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները | Գծային չափերը (մետր) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը (հա) | 120.00000 հա | | | | | | | | | |
| Ծածկագիրը | 08-035-0344-0001-հg,0343-0001-հg | | | | | | | | | |
| Նպատակային նշանակությունը | Գյուղատնտեսական | | | | | | | | | |
| Գործառական նշանակությունը | Արոտավայր | | | | | | | | | |
| Հողամասը ծանրաբեռնված է | | | | | | | | | | |

Կատարող ______ Հարություն Հարությունյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0413 տրման ամիս, ամսաթիվը 27.05.2021թ.

Իրավաբանական անձի 46.110.1181012 «ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ Տնօրեն ______ Յ.Յարությունյան 06.10.2023թ.
(պետական գրանցման համարը) (անվանումը) (ստորագրություն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 344-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՖՈՒՐՄԱՆ ԱԼԵՔԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 48-րդ, 50-րդ, 51-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Ֆուրման Ալեքի Կիրակոսյանի 2023 թվականի օգոստոսի 21-ի դիմումը

ո ր ո շ ու մ եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրում գտնվող, Ֆուրման Ալեքի Կիրակոսյանի սեփականությունը հանդիսացող, 08-033-0028-0012 կադաստրային ծածկագրով 0.13479 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայր, 7-րդ փողոց, 10 հողամաս:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՔԵՄԱԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«11 » հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 345-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑ, 31 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԹՈՒՐ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ ՝ ԱՆԻ ԱՐԹՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, 2-րդ, ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 2 -րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Աշոտի Խաչատրյանի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի դիմումը / համայնքապետարանում մուտքագրված թիվ 469 թվագրությամբ / Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը ՝

Որոշում եմ՝

1. Համաձայնություն տալ Արթուր Աշոտի Խաչատրյանին / անձնագիր AT0320188/ իր անչափահաս երեխայի՝ 14.03.2007 թվականին ծնված Անի Արթուրի Խաչատրյանի

/անձնագիր՝ AV0293154/ Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 20փողոց , 31բնակելի տան մասնաբաժինը վաճառելու:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Աշոտի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից :

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«11 » հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 346-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿԻՉ, ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱԼԵՔՍ ՆՎԵՐԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների» կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ մասի 1-ին կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի նիստի թիվ 4 արձանագրության դրական եզրակացությունը և Խուրմա Սաֆարի Սաղաթելյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակավայրի ժամանակավոր բնակիչ՝ Ալեքս Նվերի Սաղաթելյանի /ծնված՝ 2012 թվականի մարտին 29-ին/ նկատմամբ խնամակալ նշանակել տատիկին՝ Խուրմա Սաֆարի Սաղաթելյանին /անձնագիր՝AU0220310/:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումը ու պատասխանատվությունը դնել Ամասիա համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ Սամվել Էգնատոսյանի վրա:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահել Ամասիա համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտավազդ Ղուկասյանի վրա:

4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել Խուրմա Սաֆարի Սաղաթելյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«11» հոկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 347-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,2601 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 73-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/607 թույլտվությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 77-Ա որոշումը

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Բյուրակն/ 08-033-0107-0018 կադաստրային ծածկագրով 1,2601 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասը, ըստ նպատակային նշանակության, 20 տարի ժամկետով, 1 հեկտարի համար 45,000 /քառասունհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, վարձակալությամբ տրամադրել «ԴԱՆՍԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության հետ կնքել հողամասի ընդերքօգտագործման իրավունքի պայմանագիր և սույն որոշումից բխող իրավունքները ենթարկել պետական գրանցման՝ ընկերության միջոցների հաշվին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«13» հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 348-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3,9 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 73-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/498 թույլտվությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 76-Ա որոշումը

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող /բնակավայր՝ Բյուրակն/ 08-033-0107-0019 կադաստրային ծածկագրով 3,9 հեկտար արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասը, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, 40 տարի ժամկետով, 1 հեկտարի համար 45,000 /քառասունհինգ հազար/ Հայաստանի

Հանրապետության դրամ տարեկան վարձավճարով, վարձակալությամբ տրամադրել «ՅՈՒՏԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության հետ կնքել հողամասի ընդերքօգտագործման իրավունքի պայմանագիր և սույն որոշումից բխող իրավունքները ենթարկել պետական գրանցման՝ ընկերության միջոցների հաշվին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«13» հոկտեմբերի 2023 թվականի
գյուղ Ամասիա